ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պատմություն

Թեմա՝ *Բազմատեսանկյուն մոտեցումը պատմության դասավանդման մեջ*

Կազմեց՝ *Էռնա Եգորի Բարխուդարյան*
«Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ *Լիլիթ Առաքելյան*

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2022

Բովանդակություն

Ներածություն _____ *3*

Գլուխ 1: Բազմատեսանկյուն մոտեցումը պատմության դասավանդման մեջ _____ *5*

1.1 Բազմատեսանկյուն մոտեցման մասին պատմական ակնարկ _____ *5*

1.2 Բազմատեսանկյուն մոտեցման էությունը _____ *6*

1.3 Բազմատեսանկյուն մոտեցման դեպքում առաջացող խնդիրներ _____ *7*

1.4 Բազմատեսանկյուն մոտեցման հիմքերը _____ *8*

Գլուխ 2: Հետազոտական մաս _____ *11*

1.1 Բազմատեսանկյուն մոտեցման ազդեցությունն իրավիճակի գնահատման վրա _____ *11*

1.2 Բազմատեսանկյուն մոտեցման արդյունավետության մասին _____ *14*

Եզրակացություն _____ *16*

Հավելված _____ *18*

Օգտագործված գրականության ցանկ _____ *23*

Ներածություն

Գիտատեխնիկական վիթխարի թռիչքների տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ աճում է կրթության դերը: Այն վերածվում է հասարակության առաջընթացի կարևորագույն գործոնի:

Հետազոտության արդիականությունը: ՀՀ-ում փոխվում է կրթության կազմակերպումը, կառուցվածքը և բովանդակությունը: Փոխվում են հանրակրթական դպրոցի բոլոր երեք օղակների կրթադաստիարակչական խնդիրները, չափորոշիչները, ուսուցչին և աշակերտներին ներկայացվող պահանջները և այլն: Այս փոփոխություններին զուգընթաց արժևորվում է ոչ միայն տեսական գիտելիքները սովորելու, այլև դրանք համադրելու, հակադրելու, քննադատելու, հետևություններ և եզրակացություններ կատարելու կարողությունների ձևավորումը: Կարևորվում են նաև վերաբերմունքն ու արժեքային ճիշտ համակարգը:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, կենսագրությունն ու հիշողությունը, հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը, որի իմացությունը ձևավորում է ազգային ինքնագիտակցություն և մտածողություն, սեփական տեսակետն ու դիրքորոշումն ունեցող անձ ու քաղաքացի: Այս նպատակի իրագործմանը, ի թիվս այլ մեթոդների և մոտեցումների, օգնում է նաև «բազմատեսանկյուն մոտեցումը»: Հենց սրանով էլ պայմանավորված է հետազոտության արդիականությունը:

Ես ուսումնասիրել եմ «բազմատեսանկյուն մոտեցման» և միջառարկայական կապի ազդեցությունը պատմության դասավանդման մեջ:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ «բազմատեսանկյուն մոտեցման» շնորհիվ աշակերտնեի մոտ զարգանում են որոշակի փաստերը, դեպքերը համադրելու, հակադրելու, հետևություններ և եզրակացություններ կատարելու կարողությունները:

Հետազոտության առարկան: Միջին դպրոցում պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումն է:

Հետազոտության նպատակը .

- Պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման ազդեցության վերլուծություն
- Բազմատեսանկյուն մոտեցման դրական և բացասական կողմերի վերհանում:

Հետազոտության մեթոդները: Գործնական աշխատանքներ, հարցում ուսուցիչների շրջանում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, օգտագործված գրականության ցանկից, եզրակացությունից և հավելվածից:

Գլուխ 1: Բազմատեսանկյուն մոտեցումը պատմության դասավանդման մեջ

1.1. Բազմատեսանկյուն մոտեցման մասին պատմական ակնարկ

Ինչպե՞ս են սովորում պատմաբանները:
Իմ պատասխանն այսպիսին է. պատմությունը
մարդկային ինքնաճանաչման համար է:
Մարդու համար կարևոր է ինքն իրեն ճանաչելը:
Ռ. Ջ. Կոլլինգվուդ

«Բազմատեսանկյուն մոտեցում» տերմինը սկսեց լայնորեն օգտագործվել 1990-ական թվականների սկզբին, հատկապես այն գիտաժողովներում, սեմինարներում և ուսուցիչների վերապատրաստումներում, որոնք կազմակերպված էին Եվրոպայի Խորհրդի կողմից : «Բազմատեսանկյուն մոտեցում» հասկացության հիմքում ընկած գաղափարները ունեն բավականին երկար պատմություն և հիմնված են երեք մոտեցումների վրա: Այս երեք մոտեցումներից առաջինն էր այսպես կոչված «նոր պատմության» մոտեցումը, որն առաջացել է արևմտյան և հյուսիսային Եվրոպայում 1970-ական թթ. և 1980-ական թթ. սկզբին: «Նոր պատմության» մոտեցումը, թեև չէր հերքում ժամանակագրության և պատմական գիտելիքի կարևորությունը, նպատակ էր հետապնդում պատմության դասավանդման մեջ ստեղծել հավասարկշռություն անցյալի մասին աշակերտներին սովորեցնելու և անցյալի մասին պատմական տեսակետից մտածելու ունակությունը զարգացնելու միջև: Հետևաբար, այս մոտեցումն առավել կարևոր էր համարում, որ աշակերտները սովորեն, թե ինչպես պետք է վերլուծել, մեկնաբանել և համադրել պատմական վկայությունները, որոնք առկա են սկզբնաղբյուրներում և գրականության մեջ:

Երկրորդ ընդհանուր մոտեցումը կրթության ոլորտում, որը նպաստել է «բազմատեսանկյուն մոտեցման» հանդեպ հետաքրքրությանը, եղել է այն գիտակցումը, որ անցյալում պատմությունը հաճախ դասավանդվել է մեկ մշակույթի վրա հիմնվող, ավելի շատ բացառող, քան ընդգրկող տեսակետից: Այդպիսի դասավանդումը հիմնված է եղել այն գաղափարի վրա, որ ազգային պատմությունը

համընկնում է ամենամեծ ազգային խմբի կամ տիրապետող լեզվա-մշակութային համայնքի պատմության հետ:

Քննարկվող մոտեցումներից երրորդը կապված էր խորացող այն գիտակցման հետ, որ դպրոցները պետք է ավելի շատ բան անեն երիտասարդներին պատրաստելու համար՝ ապրելու այնպիսի աշխարհում, որը բնութագրվում է էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական բազմազանությամբ:

Նոր կրթական մոտեցումները սկսեցին դիտարկել մշակութային բազմազանությունը որպես մի բան, որով պետք է հպարտանան բոլոր աշակերտները, այլ ոչ թե միայն նրանք, ովքեր պատկանում են մշակութային, լեզվաբանական, էթնիկ և ազգային փոքրամասնություններին:

1.2. Բազմատեսանկյուն մոտեցման էությունը

Բազմատեսանկյուն մոտեցումը պատմության և պատմության դասավանդման մեջ նկարագրվել է Էնն Լոու-Բիերի կողմից որպես «պատմական իրադարձությունների դիտարկումը մի քանի տեսանկյուններից»[1]:

Պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման հիմնական առանձնահատկությունը որոշակի պատրաստակամությունն է դիտարկելու պատմական իրադարձությունները, զարգացումները տարբեր տեսակետներից, օգտագործելով եղանակներ և մեթոդներ, որոնք հիմնարար դեր են խաղում պատմական գիտության մեջ:

Բազմատեսանկյուն մոտեցումը կարող է մեզ օգնել ավելի լավ հասկանալ կոնֆլիկտային իրադրությունները: Այն օգնում է մեզ հասկանալ, որ կոնֆլիկտները հաճախ առաջանում են մեկնաբանությունների բախման հետևանքով, երբ կողմերից յուրաքանչյուրը մյուսին վերագրում է որոշակի ցանկություններ և նպատակներ՝ հիմնվելով ոչ թե իրականության, այլ սեփական ենթադրությունների, եզրակացությունների, տրամադրվածությունների, նախապաշարմունքների և կարծրատիպերի վրա:

[1] Ann Low-Beer, (1997), The Council of Europe and School History, Strasbourg, Council of Europe

1.3. Բազմատեսանկյուն մոտեցման դեպքում առաջացող խնդիրներ

Կարևոր է գիտակցել, որ գործնականում կան մի շարք խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել պատմության դասի ժամանակ բազմատեսանկյուն մոտեցման օգտագործմանը:

Դասավանդման մեջ բազմազան տեսակետներ օգտագործելու, առավել ևս դրանք վերլուծելու հնարավորություններ տրամադրելու համար աշակերտներին անհրաժեշտ է ժամանակ: Ազգային պատմության դասավանդման մեջ իրական բազմակարծություն ապահովելը դժվարին խնդիր է այն պարագայում, երբ ուսուցիչը պետք է համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում ներկայացնի բազմաթիվ թեմաներ: Բազմատեսանկյուն մոտեցման կիրառման համար անհրաժեշտ է պատմության դասընթացի ծրագրի ներսում որոշակի ճկունություն:

Տարածաշրջանային կամ համաշխարհային չափում ունեցող թեմաներին անդրադառնալիս, բազմատեսանկյուն մոտեցման հնարավորությունները սահմանափակվում են նաև այն լեզուների շրջանակով, որոնց տիրապետում են ուսուցիչը և աշակերտները: Այսօր համացանցի շնորհիվ կա նյութի հսկայական զանգված, հատկապես տասնիններորդ և քսաներորդ դարերի վերաբերյալ, որը ներկայացնում է բազմազան տեսակետներ՝ այդ թվում պաշտոնական և ոչ պաշտոնական: Բացի սկզբնաղբյուրներից, համացանցում նաև հնարավոր է գտնել բազմաթիվ պատմաբանների տեսակետներն արտահայտող նյութեր: Այնուամենայնիվ, այդ կայքերի մեծ մասն ամերիկյան են, նյութերի ընտրությունն արտացոլում է ամերիկյան հետաքրքրությունները, և օգտագործողը պետք է իմանա անգլերեն՝ դրանցից օգտվելու համար:

Բազմատեսանկյուն մոտեցումը կարող է առաջացնել պատմություն ուսումնասիրողների համար մեկ այլ խնդիր, հատկապես միջին դպրոցի աշակերտների համար: Այն կայանում է նրանում, որ այդ մոտեցումը կարող է հանգեցնել պատմական հետազոտության հանդեպ հիասթափության և անգամ թերահավատության առաջացման: Իհարկե, սա կարող է մի ընդհանուր բնույթի խնդիր լինել, որը վերաբերվում է աղբյուրների հիման վրա պատմության

դասավանդմանը և ընդհանրապես աղբյուրների օգտագործման վրա հիմնված դասավանդմանը: Մասնավորապես, նման խնդիրներ կարող են առաջանալ, երբ առկա վկայությունները հակասական են:

Դասավանդման և ուսումնառության այս նորովի մոտեցումը կարող են դժվար ընկալել հատկապես այն աշակերտները, որոնք յուրաքանչյուր դպրոցական առարկայի մեջ փնտրում են ակնհայտ ճշմարտություններ և ուսումնառությունը դիտարկում են որպես պարզապես որոշակի օբյեկտիվ գիտելիքի ձեռքբերման գործընթաց, գիտելիք, որը հետագայում կարելի է վերհիշել և օգտագործել: Այս խնդիրները կարող են առաջանալ նաև այն ժամանակ, երբ ուսուցիչը հենց նոր է սկսել անցումը գիտելիքի մեխանիկական փոխանցումից դեպի «նոր պատմության» մոտեցումը:

Բազմատեսանկյուն մոտեցումը ևս մեկ բարդություն կարող առաջացնել: Որքան ավելի շատ են պատմական շարադրանքի մեջ ընդգրկվող շերտերը և տեսակետները, այնքան ավելի է բարդանում ընդհանուր պատկերը, և այնքան ավելի դժվար է դառնում աշակերտի համար դատողություններ և եզրակացություններ անել, հատկապես երբ նրանք գործ ունեն տարբերվող և միմյանց հակասող տեսակետների, մեկնաբանությունների և եզրակացությունների հետ: Խնդիրն էլ ավելի է դժվարանում, երբ փորձում են բացահայտել այն բազմաթիվ եղանակները, որոնց միջոցով տեսակետները ներգործում են միմյանց վրա: Ուսուցիչը պետք է ճանապարհներ գտնի այդ կապերը աշակերտների համար ավելի շոշափելի և պակաս վերացական դարձնելու համար:

1.4. Բազմատեսանկյուն մոտեցման հիմքերը

Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցման համար պարտադիր չէ, որ աշակերտները աղբյուրները վերլուծելու, վկայությունները մեկնաբանելու և տեղեկությունները համադրելու փորձ ունենան, սակայն այդպիսի փորձն օգտակար է:

Այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ հիմնական հարցերը կարող են խմբավորվել հինգ հիմնական վերլուծական գործընթացների մեջ.

Նկարագրություն. Ի՞նչ աղբյուր է սա: Ո՞վ է այն ստեղծել: Ի՞նչպիսին է եղել աղբյուրի հեղինակի ներգրավվածությունը իրադարձություններին: Ո՞րքան ժամանակ է անցել իրադարձությունից: Ադրյո՞ք աղբյուրն ասում է, թե որն է եղել դրա ենթադրվող լսարանը: Արդյո՞ք աղբյուրն ասում է, թե որն է եղել դրա հեղինակի նպատակը: Ի՞նչ է այն մեզ ասում որոշակի պատմական իրադարձության կամ զարգացման մասին:

Մեկնաբանություն. Եթե մենք չգիտենք, թե ով է եղել աղբյուրի հեղինակը, արդյո՞ք աղբյուրից ինչ-որ բան կարելի է եզրակացնել նրա մասին: Արդյո՞ք աղբյուրից կարելի է գուշակել, թե ինչպես է հեղինակը ձեռք բերել տեղեկատվությունը: Արդյո՞ք կարելի է ստուգել, որքանով է տեղեկատվությունը արժանահավատ: Կարող ենք արդյո՞ք տարբերակել ստուգման ենթարկվող փաստերը, փորձագիտական կարծիքը և անձնական կարծիքը: Կարող ենք արդյո՞ք գտնել աղբյուրի տեսակետը պայմանավորող հանգամանքները: Արդյո՞ք աղբյուրի հեղինակն առաջարկում է որոշակի եզրակացություններ: Արդյո՞ք դրանց ետևում կան որոշակի վկայություններ կամ կարծիքներ:

Կապեր նախկինում ունեցած գիտելիքի հետ. Արդյո՞ք աղբյուրի հաղորդած տեղեկությունները հաստատում են այլ աղբյուրներում առկա տեղեկությունները, թե հակասում են դրանց:

Վկայությունների մեջ բացթողումներ գտնելը. Արդյո՞ք բացակայում են որոշակի անուններ, տարեթվեր, կամ այլ փաստեր, որոնք կարող էին օգնել պատասխանել նախորդ հարցերին:

Հետագա տեղեկատվության աղբյուրներ գտնելը. Ո՞ր աղբյուրների օգնությամբ կարելի է ստուգել աղբյուրի հաղորդած տեղեկությունները և մեկնաբանությունները:

Գոյություն ունեն մի շարք եղանակներ, որոնք թույլ են տալիս նախապատրաստել աշակերտներին հակադիր տեսակետներ պարունակող սկզբնաղբյուրների հետ աշխատելուն: Հնարավոր տարբերկներից մեկն է՝ օգտագործել որևէ լավ հայտնի պատմական կամ ժամանակակից դատական գործ, և հրավիրել աշակերտների ուշադրությունը, որ.

• Վկաները կարող են լինել տարբեր (ականատեսներ, մարդու բնավորության մասին պատմող, մեղադրող կողմի և պաշտպանության):

• Մեղադրող և պաշտպանող կողմերն ընտրովի են օգտագործում վկայությունները և դրանց հիման վրա ներկայացնում հակասող տեսակետներ:

• Ատենակալները գնահատում են հակասող վկայությունների ճշմարտացիությունը վերջիններիս վերլուծության հիման վրա:

Մեկ այլ եղանակ է՝ սկսել բազմատեսանկյուն աշխատանք այն բանից հետո, երբ աշակերտները լսել են որոշակի բանավոր վկայություն, և այնուհետև մանրամասն վերլուծել այդ վկայությունը: Դա կօգնի նրանց սեփական փորձով համոզվել, որ հիշողությունը մեծապես ազդում է բանավոր վկայության վրա և մարդիկ, որոնք խոսում են միևնույն իրադարձությունների մասին, կարող են դրանք տարբեր կերպով նկարագրել և մեկնաբանել:

Գլուխ 2: Հետազոտական մաս

1.1. Բազմատեսանկյուն մոտեցման ազդեցությունն իրավիճակի գնահատման վրա

Միջին դպրոցում պատմության դասավանդման ավանդական մեթոդների մեծ մասը բերում են գիտելիքի մեխանիկական մտապահման: Գիտատեխնիկական զարգացման այս դարաշրջանում դա շատ քիչ է, հետևաբար ստեղծվում են նոր մեթոդներ և մոտեցումներ, որպեսզի գիտելիքի հետ մեկտեղ աշակերտը ձեռք բերի նաև կարողություններ :

7-րդ դասարանում *«Արշակ II-ի և Պապ թագավորի ջանքերը կենտրոնական իշխանության ուժեղացման ուղղությամբ»* դասի ավարտին կազմակերպեցի քննարկում, որի ավարտին աշակերտները հնարավորություն ունեցան 1-10 բալային համակարգով գնահատելու Արշակ II-ին, Վասակ Մամիկոնյանին, Շապուհին, Ներսես Մեծին և Փառանձեմին:



Նույն թեմայի շրջանակներում անցկացրեցի գործնական աշխատանք կերպարային քարտերով՝ նախապես ծանոթացնելով աշակերտներին «Արշակ և Շապուհ» ավանդազրույցին, որպեսզի աշակերտները կարողանան ավելի խորքային ծանոթանալ իրավիճակին և կերպարի դերի մեջ մտնելով գնահատեն նրա կատարած քայլերը:

Գործնական աշխատանքից հետո կրկին անցկացրեցինք կերպարների գնահատում, որի արդյունքները տարբերվում էին նախնական գնահատումից:



Նույն դասարանում *«Վարդանանց պատերազմը կամ Ավարայրի ճակատամարտը»* թեմայի շրջանակներում նախ ներկայացրեցի պատմական իրադարձության իրական, փաստարկված ընթացքի նկարագրությունը, ապա աշակերտների հետ դասագրքից դուրս բերեցինք երեք գործոն, որոնք ազդել են նկարագրված ընթացքի վրա.

- Վասակ Սյունու տղաները պատանդ էին Տիզբոնում,
- Սպարապետը շտապեց աղվաններին օգնության,
- Բյուզանդական կայսրությունը օգնություն չցուցաբերեց:

Աշակերտները կարծիքներ հայտնեցին իրավիճակի վրա գործոնների ազդեցության մասին: Կրծիքները շատ տարբեր էին: Փորձել եմ ամբողջացնել դրանք ստորև բերված աղյուսակում:



Դասարանը բաժանեցի 3 խմբի և յուրաքանչյուր խմբին առաջարկեցի մեկ գործոն բացառել ու մտածել, թե ինչ կլիներ, եթե...

Խմբերը ներկայացրեցին իրենց կազմած սցենարները, որոնց մեջ ներառել էին նաև այլ՝ առաջին հայացքից աննշան գործոնների ազդեցությունը : Քննարկումից հետո աշակերտները եկան այն եզրակացության, որ անգամ ամենաչնչին գործոնը կարող է լուրջ ազդեցություն ունենալ պատմության ընթացքի վրա: Այս անգամ նույնպես կարծիքները, հետևաբար նաև աղյուսակը, փոփոխվեցին:



1.2. Բազմատեսանկյուն մոտեցման արդյունավետության մասին

Պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցման ազդեցությունը հետազոտական աշխատանքիս նպատակներից մեկն է: Այդ պատճառով, բացի գործնականում կիրառելուց, անց եմ կացրել նաև հարցում ուսուցիչների շրջանում Google forms գործիքի միջոցով (https://forms.gle/fcU1rDAM5EB1bJex8): Հարցման միջոցով փորձել եմ ճշտել բազմատեսանկյուն մոտեցման կիրառման նպատակահարմարությունը պատմության դասավանդման մեջ, առաջացող խնդիրների բարդությունը, ինչպես նաև կիրառման այլ գործոնների ազդեցությունը: Հարցման արդյունքները ներկայացրել եմ ստորև:




Ի՞նչ խնդիր է ծագում նշված մոտեցումը կիրառելիս
ժամանակի սղություն
աղբյուրների սակավություն
կիրառման անհնարինություն


Ի՞նչ բացասական կողմեր ունի նշված մոտեցումը
առաջացնում է հակասություններ
բարդ է կիրառելը
չունի բացասական կողմեր

Եզրակացություն

Չնայած պատմության դասավանդման բազմաթիվ մեթոդների առկայությանը՝ այնուամենայնիվ ժամանակի հետ նոր մոտեցումների կիրառման անհրաժեշտություն է առաջանում: Վերջիներիս կիրառման համար որոշակի ծրագրային ճկունություն է անհրաժեշտ, քանի որ նոր մոտեցումները պահանջում են ավելի շատ ժամանակ և ավելի բազմակողմանի ուսումնասիրություններ:

Բազմատեսանկյուն մոտեցումը պարզապես պատմական մեթոդի կիրառումը չէ: Նրա նպատակն է ընդլայնել պատմական վերլուծության շրջանակները որոշակի թեմայի կամ երևույթի վերաբերյալ:

Ուսումնական գործընթացում բազմատեսանկյուն մոտեցման օգտագործման հնարավորություն կա. այն կարող է կիրառվել տարվա մեջ մեկ կամ երկու թեմաների ուսուցման ժամանակ՝ աշակերտներին համապատասպան վերլուծական գործընթացներին ծանոթացնելու նպատակով: Բացի այդ, հնարավոր է թույլ տալ, որ ներկայացված տեսանկյունների բազմազանությունը չընդգրկի բոլոր հնարավոր տարբերակները:

Կարճաժամկետ հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ աշակերտները ավելի լավ են յուրացնում նյութը, երբ ուսումնասիրում են տարբեր աղբյուրներ և վկայություններ, քննարկում և բանավիճում: Բացի այդ, երբ նրանք դառնում են գործողության ակտիվ մասնակից, սկսում են ավելի շատ պրպտել, լրացուցիչ նյութեր ուսումնասիրել, ինչը դրական է անդրադառնում աշակերտների ուսումնառության հետագա ընթացքի վրա: Իհարկե այստեղ շատ կարևոր է, որ ուսուցիչը համակարգի և վերահսկի այս գործընթացը, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգնության հասնի:

Ուսուցիչների հարցման արդյունքում պարզ դարձավ, որ թեև բազմատեսանկյուն մոտեցման կիրառման ընթացքում գործնականում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, սակայն դրանք լուծելի են (գոնե մասամբ): Կարևոր է, որ լինի աշխատելու, բազմատեսանկյուն մոտեցումը կիրառելու ցանկություն և պատրաստակամություն:

Այսպիսով՝ կարծում եմ պատմության դասավանդման մեջ բազմատեսանկյուն մոտեցումը որքան բարդ, այդքան էլ անհրաժեշտ է, քանի որ այն նպաստում է փաստերի բազմակողմանի ուսումնասիրմանը, աշակերտների մտածողության , եզրահանգումներ կատարելու կարողության զարգացմանը, ինչպես նաև ուսումնական նյութի յուրացման արդյունավետության բարձրացմանը:

Հավելված

Դասի պլան 1

Դասարան	7-րդ
Ուսուցիչ	Էռնա Բարխուդարյան
Առարկա	Հայոց պատմություն
Թեմա	Դաս 2. Արշակ II-ի և Պապ թագավորի ջանքերը կենտրոնական իշխանության ուժեղացման ուղղությամբ: Գործնական աշխատանք:
Նպատակը	Նպաստել Արշակունյաց արքայատոհմի վերաբերյալ գիտելիքների ձեռք բերմանը, թագավորական իշխանության ամրապնդման համար պայքարի, զարգացման ընթացքի ու անկման հետ կապված կարևոր իրադարձությունների, փաստերը բացատրելու, նշանավոր արքաների, գործիչների գործունեությունը համեմատելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը:
Վերջնարդյունք	***Կարողանա՝*** ➢ Ներկայացնել և բացատրել Արշակունյաց արքայատոհմի նշանավոր արքաների, Հայաստանի բաժանումների և Արշակունիների թագավորության թուլացման և անկման հետ կապված կարևոր փաստերը: ➢ Ներկայացնել Արշակ 2-րդի վարած ներքին և արտաքին քաղաքականությունն ամբողջությամբ ➢ նշել Արշակունի արքաների օրոք տեղի ունեցած կարևոր դեպքերը՝ տնտեսական, քաղաքական տեղաշարժերը, շինարարական աշխատանքները, պատերազմները:
Միջառարկայական կապեր	Գրականություն
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, կերպարային քարտեր

Ժամանակ	Դասի տևողությունը 45ր
Դասի ընթացքը	➢ Ֆրոնտալ հարցում 5ր ➢ «Արշակ և Շապուհ» ավանդազրույցի ընթերցում 5ր ➢ Կերպարների բաժանում 5ր ➢ Կերպարային քարտերում նշված հարցերի շուրջ մտածելու ժամանակի տրամադրում 5ր ➢ Կերպարային քարտերում նշված հարցերի միջոցով կերպարների ներկայացում 20 ր ➢ Ամփոփում 5ր

 Արշակ II Դուք Արշակ II թագավորն եք: Պատերազմելով 4 տարի, ի վերջո հրավիրվում եք Տիզբոն՝ հաշտություն կնքելու: Հաշվի առնելով ոչ միայն զորքի դժգոհությունն ու ուժերի անհավասարությունը, այլ նաև թշնամու նենգությունը, ինչպե՞ս կվարվեք:	 Շապուհ Դուք պարսից Շապուհ արքան եք: Չնայած նրան, որ ունեք մեծաքանակ զորք և հնարավորություններ, այնուամենայնիվ հայերը կռվում են անձնվիրաբար և կարողանում են հասնել որոշակի հաջողությունների: Ի՞նչ այլ խորամանկության կդիմեք հաղթանակ տանելու համար:	 Փառանձեմ Դուք Արշակ II թագավորի կին Փառանձեմն եք: Իմանալով Շապուհ արքայի հրավերի մասին ինչպե՞ս կվարվեք:

 Ներսես Մեծ Դուք մինչ այս զինվորական, արքունիքի սենեկապետ, իսկ այժմ կաթողիկոս Ներսես Մեծն եք: Ինչպե՞ս կփորձեք օգնել զորքին, որն արդեն հոգնել է կռվից:	 Վասակ Դուք սպարապետ Վասակ Մամիկոնյանն եք: 4 տարի պատերազմել եք թշնամու դեմ և տեղեկանում եք, որ թագավորը հրավիրվել է Տիզբոն՝ հաշտություն կնքելու: Ի՞նչ խորհուրդ կտաք թագավորին:	

Դասի պլան 2

Դասարան	7-րդ
Ուսուցիչ	Էռնա Բարխուդարյան
Առարկա	Հայոց պատմություն
Թեմա	Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը
Նպատակը	Նպաստել՝ 5-րդ դարում հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին գիտելիքների ձեռքբերմանը, կարևոր իրադարձությունները, փաստերը, գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, դիրքորոշում հայտնելու և 5-րդ դարի ազատագրական պայքարի դերը հայ ժողովրդի պատմության մեջ արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունք	**Կարողանա՝** ➢ Ներկայացնել Վարդանանց և Վահանանց պատերազմների ժամանակը, կարևոր դրվագները, ղեկավարներին ➢ Վարդանանց և Վահանանց պատերազմների դեպքերը ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ, ➢ արժևորել 5-րդ դարի ազատագրական պայքարի դերը հայ ժողովրդի պատմության մեջ
Օգտագործվող նյութեր	Դասագիրք
Ժամանակ	Դասի տևողությունը 45ր
Դասի ընթացքը	➢ պատմական իրադարձության իրական, փաստարկված ընթացքի նկարագրություն ➢ պատմական իրադարձության ընթացքի վրա ազդեցություն ունեցած գործոնների դուրսբերում ➢ աշակերտների բաժանում 3 խմբի

	➢ սցենարների կազմում. յուրաքանչյուր խումբ, մեկ գործոն բացառելով, մտածում է, թե ինչ կլիներ, եթե... ➢ սցենարների ներկայացում և քննարկում ➢ ՛ամփոփում

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարություն Պապոյան, Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Եր., 2013 թ.
2. Պարադիգմա կրթական հիմնադրամ, Գրիք պատմության ուսուցման. ինչո՞ւ, ինչպե՞ս, Եր., 2020 թ.
3. Ռոբերտ Ստրադլինգ , Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը, Եր. 2003 թ.
4. Robert Stradling, (2000), Teaching 20th-Century European history, Strasbourg, Council of Europe Publishing
5. Ann Low-Beer, (1997), The Council of Europe and School History, Strasbourg, Council of Europe